ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀՀ- ՄԱԾՁԲ-22/6- Պ

ք. Երևան

,,__,, հունվարի 2022 թ.

«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ / այսուհետ՝ կատարող/ ի դեմս « Կենտրոն -2 » մասնաճյուղի տնօրեն Կ Իլոյանը մի կողմից, և << Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն>> ՓԲԸ-ն/ այսուհետ՝ պատվիրատու/ ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը պարտավորվում է նշված օբյեկտներում /ընդամենը ----- օբ./ կատարել ______ դեռատիզացիոն աշխատանքներ, ըստ կողմերի միջև պայմանավորված ժամանակացույցի, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը, իսկ պատվիրատուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել կատարված աշխատանքների համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը պարտավորվում է՝

ա/ օբյեկտներում կատարել դեռատիզացիոն աշխատանքներ՝ իր բանվորական ուժերով, սարքավորումներով և նյութերով:

բ/ Աշխատանքները կատարել պատվիրատուի կողմից պահանջվող ժամկետներում:

2.2 Պատվիրատուն պարտավորվում է՝

ա/ Ընդունել մատուցված ծառայության վերաբերյալ կատարողական թերթիկները և հաշիվ- ապրանքագրերը, իսկ ծառայության ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել կատարողին:

բ/ Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

գ/Օբյեկտներում տեղադրված որսի միջոցների և սարքավորումների անհետանալու դեպքում փոխհատուցել վնասը՝ դրանց արժեքի չափով:

3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրով կատարողի մատուցված ծառայության գինը կազմում է ամիսը 50000 / հիսուն հազար / (տառերով) ՀՀ դրամ, ԱԱՀ-ից ազատված է: Գինը ներառում է կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է կանխիկ կամ անկանխիկ: Դրամական միջոցների վճարումը կատարվում է կատարողական թերթիկների հաշիվ- ապրանքագրերի հիման վրա, մինչև ծառայության մատուցմանը հաջորդ ամսվա 10-ը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 01.01.2022թ. և գործում է մինչև 31.12.2022թ:

5.2 Սույն պայմանագիրը վաղաժամկետ կարող է դադարեցվել, կողմերից մեկի նախաձեռնությամբ, եթե խախտվել են պայմանագրի պայմանները, այդ մասին ոչ ուշ քան 10 օրյա ժամկետում գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին, նշելով հրաժարման պատճառը:

5.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից:

5.4 Սույն պայմանագրի կնքմամբ դադարում են գործել նախկինում կնքված պայմանագրերը:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

| «Պատվիրատու» | | « Կատարող» | |
|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ** | | **«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ** | |
| հասցեն՝ | Հովսեփյան , 26 | հասցեն՝ | Մ. Խորենացի,160 |
| էլ. հասցեն՝ | | էլ. հասցեն՝ | desinfection.c |
| հեռ. | 65 00 15 | հեռ. | 57-35-90 |
| Հ/Հ | 247010279674000 | Հ/Հ | 163068101555 |
| ՀՎՀՀ | 01540062 | ՀՎՀՀ | 00402063 |
| բանկը | Արդշինբանկ ՓԲԸ | բանկը | Հայէկոնոմբանկի Էրեբունու մասնաճյուղ |
| Գործադիր տնօրեն | Հ. Մովսիսյան | « Կենտրոն 2 » մ/ճ տնօրեն | Կ. Իլոյան |
| ստորագրություն ______ | | ստորագրություն ______ | |
| Կ.Տ. | | Կ.Տ. | |